ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԱՆՈՒՆՈՎ ԹԵՄԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՆԹԻԼԻԱՍԻՑ

Սրտագին շնորհավորություններ նոր տարվա և Ս. Ծննդյան տոների առթիվ: Մաղթում ենք Ձերդ Վեհափառության երկար կյանք: Ամենասուրբն Աստված անսասան պահե Հայոց եկեղեցին և խաղաղություն պարգևե մարդկության:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ՝
ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Նոր տարվա և Ս. Ծննդյան տոների առթիվ սրտագին շնորհավորություններ մեր և համայն ժողովրդից՝ սրտանց մաղթելով Ամենակալից շնորհք, երկար կյանք և առողջություն, և եկեղեցուն՝ առավել պայծառություն:

ՊԱՏՐԻԱՐՔ ԹՅՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ՝
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Ձերդ Վեհափառության մատուցում ենք հարգալիր շնորհավորություններ ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ: Աղոթում եմ Ամենակալին՝ շնորհե Ձեզ երկար կյանք և անսասան պահպանե մեր Մայր Աթոռը և Հայրենիքը:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ՝
ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցու միաբանությունը շնորհավորում է Ձերդ Վեհափառության նոր տարին, Ծնունդն ու Մկրտությունը, Քրիստոսով ցանկանալով Ձեզ երկար կյանք, առողջություն և հաջողություն:

Առաջնորդ Շիրակի թեմի՝
ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԹԲԻԼԻՍԻՑ

Շնորհավորում ենք Ձեր նոր տարին, ի սրտե ցանկանում ենք Ձեզ առողջություն և երկարատև կյանք:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՀԻՐԵԻՑ

Իմ և Եգիպտոսի հոգևորականության անունից խնդրում ենք Ձերդ Վեհափառության՝ հաճեցեք ընդունել մեր հարգալիր ցանկությունները նոր տարվա և Ս. Ծննդյան տոների առթիվ: Խնդրում ենք հավատալ մեր կատարյալ անկեղծության և աղերսում ենք Ձերդ հայրապետական օրհնությունները:

Առաջնորդ Եգիպտահայ թեմի՝
ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ հաճեցեք ընդունել մեր հոտի և մեր սրտագին մաղթանքները՝ Ձեր թանկագին կյանքի առողջության և Մայր Աթոռոս պայծառության համար:
Խոնարհ որդի, աղոթակից,

Հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի հայոց՝
ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Ռումինահայ թեմի և մեր անունով շնորհավորում ենք սիրո ու խաղաղության ավետաբեր Աստվածորդու Ս. Ծնունդը և նոր տարին ու մաղթում ենք Ձեզ քաջառողջ և երկար կյանք, Մայր աթոռին՝ անսասանություն, հարազատ Սովետական Հայրենիքին՝ խաղաղ առաջընթաց:

Առաջնորդ Ռումինահայ թեմի՝
ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՃՅԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Քրիստոսի Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առթիվ ընդունեցեք մեր և մեր թեմի հոգևորական դասի և հոտի սրտագին մաղթանքները՝ Ձերդ Սրբության առաջնորդության և Մայր Աթոռոս պայծառության համար:

Առաջնորդ Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի՝
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ

ՓԱՐԻԶԻՑ

Նոր տարվա և Ծննդյան տոների առթիվ մատուցանում ենք անձամբ ես, ճմանապես խորհուրդն ու հավատացյալները՝ սրտագին շնորհավորություններ, լավագույն ցանկություններ, հարգալիր մեծարանք: Մաղթում ենք Ձերդ Վեհափառության առողջություն և երկար կյանք, Հայոց եկեղեցուն՝ բարգավաճում և փառավորություն, Ձերդ Վեհափառության իմաստուն և քաջառես հովանու տակ:

Եվրոպայի թեմի հայրապետական պատվիրակ՝
ՍԵՐՈՎԲԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՖՐԵԶՆՈՅԻՑ

Ամանորի և Աստվածահայտնության երջանկաբեր տոների առթիվ կհայտնենք Ձեզ շնորհավորություններ իմ, եկեղեցական դասի, երեսփոխանական ժողովո, կենտրոնական վարչության և բեմիս համայն եկեղեցական մարմինների և հավատացյալ հոտի անունով: Կմաղթենք աշխարհին խաղաղություն, եկեղեցուն՝ բարգավաճում, Մայր Աթոռին՝ անսասանություն, Վեհափառությանդ՝ քաջառողջ կյանք և երջանիկ տարիներ:

Առաջնորդ Կալիֆորնիո թեմի՝
ՇՆՈՐՀՔ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ԼՈՆԴՈՆԻՑ

Խնդրում ենք ընդունեցեք մեր համայնքի շնորհավորությունները Ծննդյան տոների առթիվ: Այսօր աղոթում ենք Ձերդ Վեհափառության և Ս. Էջմիածնի համար:

Հոգևոր հովիվ Լոնդոնի հայոց՝
ՊՍԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԹՈՒՄԱՅԱՆ

ԲԱՔՎԻՑ

Թեմական խորհուրդը, հոգևորականությունը, հավատացյալները և անձամբ ես շնորհավորում ենք Ձեր նոր տարին և Ծննդյան սուրբ տոնը: Ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկարատև կյանք՝ ի բարօրություն Հայ եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի: Համբուրում ենք Ձեր Աջը:

Ադրբեջանի հայոց եկեղեցական թեմի առաջնորդ՝
ԳԱՐԵԳԻՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԵՐԵՎԱՆԻՑ

Ծննդյան և ամանորի տոների առթիվ հոգաբարձությունը, քահանայից դասը և հավատացյալք շնորհավորում են Ձեզ, բարեմաղթելով, որ հայրապետական գահի վրա երկար տարիներ գահակալեք, հօգուտ հայ ժողովրդի և հանուն խաղաղության:

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ԵՐԵՎԱՆԻՑ

Նոր տարվա և Ս. Ծննդյան առթիվ Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու քահանայից դասի, հոգաբարձության և հավատացյալների անունից խնդրում ենք ընդունել առողջության, խաղաղության և երկար տարիների մաղթանքներ: Կատարեցինք Հայրապետական մաղթանք:

Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ՌՈՍՏՈՎԻՑ

Մենք, հոգևորականությունը, թեմական խորհուրդը և հավատացյալները շնորհավորում ենք Ձեր նոր տարին, ցանկանում ենք Ձեզ առողջություն և երկարատև կյանք՝ ի բարգավաճումն Հայրենիքի և ի բարօրություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու:

Հյուսիսային Կովկասի հայոց թեմի առաջնորդ՝
ՎԱՐԴԱՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Աստվածարյալ Ս. Հայրապետ,

Նոր տարին ու Փրկչին Ս. Ծննդյան և Հայտնության տոնը՝ որդիական անկեղծությամբ և խորին ակնածանքով շնորհավորելով, կնայցեմ մանուկ Հիսուսի աստվածային շնորհն ու գութը, աշխարհի խաղաղության, ազգերու սիրելության, պետությանց հաշտության, Հայաստանյայց Ս. Եկեղեցվո ամուր միասնականության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության համար, օգնականությամբ մաքուր աղոթից Ձերդ Վեհափառության, որուն ընդ երկար քաջառողջ կյանքին և արևշատության՝ տիվ և գիշեր անդադար կաղոթե Հայրենիքի թե Սփյուռքի Ձեր համայն հոտը:

Ազգիս ընդհանրական և քաջարքուն Հայրապետիդ թանկագին կենաց համայր ամոթ երկարության բարեմաղթու և Ձերդ Ս. Օծության հոգեսուն զավակաց տուրպս՝ խոնարհաբար կմատչիմ ի համբույր օծյալ Ս. Աջույդ, մնալով միշտ հավատարիմ ծառա և ամենահնազանդ որդի՝

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՄԻԼԱՆԻՑ

Շնորհավոր ամանոր և Ծնունդ: Կաղոթենք Ձեր առողջության, եկեղեցվո, աշխարհի բարօրության համար:

ԶԳՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ԱԹԵՆՔԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ, հանձինս հունահայ գաղութին, պատիվ ունենք մատուցանելու ջերմագին շնորհավորություններ և բարեմաղթություններ՝ Ձերդ Վեհափառության և Հոգևոր Խորհրդի արևշատության համար:

ՀԱՅՐ ՆԵՐՍԵՍ ԽՈՇՈՐՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ խոնարհաբար հայտնելով մեր սրտագին շնորհավորությունները, բարեմաղթում ենք Ձերդ Վեհափառության արևշատություն երկար տարիների համար:

ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ
ԵՎ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԹԱՎՐԻԶԻՑ

Թեմական ժողովը, թեմական խորհուրդը և համայն ժողովուրդը ջերմեռանդորեն համբուրելով Ձերդ Ս. Աջը, շնորհավորում են նոր տարին և Ս. Ծննդյան տոները՝ մաղթելով Ձեզ երկար կյանք, համերաշխ ընդ երկայն ավուրս տեսնել Ձեզ հայրապետական գահի վրա:

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ԲԱՂԴԱԴԻՑ

Ամբողջ համայնքով շնորհավորում ենք նոր տարին և Ս. Ծնունդը՝ ցանկանալով Ձերդ Վեհափառության երկար կյանք և արևշատություն:

Առաջնորդական տեղապահ՝
ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱԼԿԱԹԱՅԻՑ

Շնորհավորում ենք Ձերդ Վեհափառության և միաբանության նոր տարին և Ս. Ծնունդը:

ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՀԱՄԱՅՆՔ

ԿԻՐՈՎԱԿԱՆԻՑ

Կիրովականի հավատացյալ ժողովուրդը շնորհավորում է Ձեր նոր տարին, ցանկանում Ձեզ երկար կյանք և առողջություն՝ անսպառ ջանքով աշխատելու Հայրենիքի ու Ս. Եկեղեցու համար:

Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ՆԻՍԻՑ

Կյուպենկյան և ես երախտագետ ենք Ձեր հեռագրերի համար: Աղոթում ենք, որ հայ ժողովուրդը երկար ժամանակ վայելե Ձեր հայրապետական հովանավորությունը:

ՎԱՀԱՆ ՄԱԼԵՋՅԱՆ

ԶԱՈՒՋԻԿԱՈՒԻՑ

Թեմական խորհուրդը, հավատացյալները և անձամբ ես շնորհավորում ենք Ձեր նոր տարին, ցանկանում ենք Ձերդ Վեհափառությանը առողջություն, երկարատև կյանք՝ ի բարօրություն և ի բարգավաճումն հարազատ եկեղեցու և հավատացյալների:

ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԹԱՎԱՐԲԵԿՅԱՆ